ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՀՈՎԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

Հայաստանի համայնքների միությունը սերտորեն համագործակցում է ԵԽ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հետ: Հայաստանը Կոնգրեսում ներկայացված է 4 անդամներից և 4 փոխարինողներից բաղկացած պատվիրակությամբ: Պատվիրակության ղեկավարը Միության նախագահ Էմին Երիցյանն է:

Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը համաեվրոպական քաղաքական հավաք է, որի 648 ընտրված անդամները (կարող են լինել համայնքային խորհուրդների անդամներ, քաղաքապետեր կամ տարածքային իշխանությունների ղեկավարներ) ներկայացնում են Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների ավելի քան 200,000 տեղական ինքնակառավարման մարմիններ:

Կոնգրեսի նպատակն է խթանել տեղական և ռեգիոնալ ժողովրդավարությունը, բարելավել տեղական և ռեգիոնալ կառավարումը և ամրապնդել իշխանությունների ինքնակառավարումը: Կոնգրեսը՝

- Եվրոպայի տեղական և տարածքային իշխանության մարմինների շահերի արտահայտողն է,
- ներկայացուցչական համահավաք է, որի շրջանակներում տեղական և տարածքային իշխանությունների ընտրված ներկայացուցիչները կարող են քննարկել ընդհանուր խնդիրներ, փոխանակել իրենց փորձը և ԵԽ անդամ պետությունների կառավարություններին ներկայացնել իրենց դիրքորոշումները,
- Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին ներկայացնում է առաջարկություններ տեղական և տարածքային կառավարման ոլորտի քաղաքականությունների վերաբերյալ,
- սերտորեն համագործակցում է տեղական և տարածքային իշխանության մարմինները ներկայացնող ազգային և միջազգային կազմակերպությունների հետ,

- կազմակերպում է լսումներ և համաժողովներ՝ ներգրավելով հասարակության լայն շերտերի,
- պարբերաբար զեկույցներ է կազմում Կոնգրեսի անդամ, ինչպես նաև անդամության թեկնածու բոլոր պետություններում տեղական ժողովրդավարության վիճակի վերաբերյալ՝ մասնավորապես հետևելով, թե ինչպես են իրականացվում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները,
- գործնական օժանդակություն է ցուցաբերում նոր անդամակցած պետություններին արդյունավետ տեղական և տարածքային կառավարման մարմիններ ունենալու գործում:

Կոնգրեսը հատուկ ուշադրության է արժանացնում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների պահպանմանն ու իրականացմանը: Այն խրախուսում է լիազորությունների փոխանցման և ռեգիոնալացման գործընթացները, ինչպես նաև քաղաքների ու ռեգիոնների միջև անդրսահմանային համագործակցությունը:

Եվրոպական Միության Արևելյան գործընկերության տեղական և տարածքային իշխանությունների համաժողով (CORLEAP)

Հայաստանը CORLEAP-ում ներկայացված է 3 անդամից բաղկացած պատվիրակությամբ: Պատվիրակության ղեկավարը Միության նախագահ Էմին Երիցյանն է:

CORLEAP-ը Եվրոպական միության և Արևելյան գործընկերության երկրների տեղական և ռեգիոնալ իշխանությունների քաղաքական ֆորում է: Այն միակ հարթակն է, որը հնարավորություն է տալիս քննարկել քաղաքների և ռեգիոնների ներուժը Արևելյան գործընկերության զարգացման գործընթացներում:

CORLEAP-ում ներկայացված են 36 տեղական և ռեգիոնալ քաղաքական գործիչներ, որոնցից 18-ը՝ ԵՄ Ռեգիոնների կոմիտեից և 18-ը՝ Արևելյան գործընկերության անդամ 6 երկրներից:

Հայաստանի պատվիրակությունը շոշափելի մասնակցություն ունի կառույցի աշխատանքներում: Հայկական կողմը երկու անգամ ստանձնել է CORLEAP-ի համանախագահությունը, հեղինակել է համաժողովի կողմից ընդունված երկու թեմատիկ տարեկան զեկույց: CORLEAP-ի հետ համագործակցությամբ Հայաստանում կազմակերպել են մի շարք միջոցառումներ, այդ թվում Հայաստանում անցկացվել են Բյուրոյի նիստեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ